Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

2020թ. բյուջեի վարչական մասի ծախսերում անհրաժեշտ է նախատեսել 1.0 մլն դրամ նոր կորոնոսավիրուսային հիվանդության համաճարակային իրավիճակի հետ կապված ախտահանման և արտակարգ իրավիճակներում չնախատեսված աշխատանքներ իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ արտակարգ իրավիճակի հետ կապված դադարեցվել են մասսայական միջոցառումները, առաջարկվում է Հայրենական Մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման օրվան նվիրված միջոցառման համար նախատեսված միջոցներից նվազեցնել 1.0 մլն. դրամ և հատկացնել հակահամաճարակային միջոցառումներին:

2020թ. Բյուջեի ֆոնդային մասում համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարումից մուտքեր է նախատեսվել 37728.0 հազար դրամ, սակայն բյուջեում նախատեսվածից ավելի մուտքերը կազմել է 190.0 մլն. Դրամ, որն առաջացել է Մասիսի արդյունաբերական հանգույցում գտնվող հողերի աճուրդ-վաճառքից: Ինքնակամ կառուցված շենք- շինությունների վաճառքից համայնքի բյուջե է մուտք եղել 171.3 հազար դրամ, որը նախատեսված չի եղել ֆոնդային բյուջեի եկամտային մասում:

Առաջարկվում է 2020 թ. բյուջեի ֆոնդային մասի համայնքի սեփականություն համարվող հողերի օտարումից մուտքերը ավելացնել 190.0մլն դրամով, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարումից մուտքերը՝ 171.3 հազար դրամով: Ավելացված միջոցների՝ 190171.3հազ. դրամի չափով ավելացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վարչական սարքավորումների ձեռք բերման հոդվածը:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան